ՀԱՎԵԼՎԱԾ
«Երևանի պետական համալսարան»
հիմնադրամի ռեկտորի
2024 թ. հոկտեմբերի 31-ի
թիվ 210/47-Լ հրամանի

ԵՊՀ ուսումնական ստորաբաժանման ղեկավարի հաշվետվություն

Ուսումնական ստորաբաժանում	ԵՊՀ ԻՄ
Դեկան/տնօրեն՝	ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար, ֆ.մ.գ.թ., դոցենտ Ա. Հ. Մակարյան
Ժամանակահատված	2023-2024 ուսումնական տարի
Ներկայացման ամսաթիվ	

Իջևան 2024

Ստորաբաժանման գործունեության վերաբերյալ ղեկավարի հաշվետվությունը

Հաշվետու 2023-24 ուստարում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղն իր գործունեությունը կառուցել է 2022-26թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների պլանի համաձայն:

Մասնաճյուղն իր գործողությունների պլանի շրջանակներում իրականացնում է գործընթացներ, որոնք ուղղված են համալսարանի արդիականացմանը, թվային հարթակների զարգացմանը, արտաքին և միջազգային ակտիվ համագործակցությանը, նոր կրթական ծրագրերի, գիտահետազոտական, մեթոդական և կադրային ճկուն համակարգի զարգացմանը: Վերոնշյալ գործընթացների պատշաճ իրականացման արդյունք են հանդիսանում մատչելի կրթությունը, ուսանողակենտրոն միջավայրը, ակտիվ համագործակցությունները, ուսումնական նոր հնարավորությունները, ուսանողների հաջողությունները, մրցունակ և պահանջված շրջանավարտները, նորարարությունները, համապատասխանեցումը աշխատաշուկայի նոր պահանջներին և առաջարկներին, արձագանքը տարածաշրջանի ուսումնական և գիտական խնդիրներին:

Պլանավորված գործողություններն ուղղորդված են ապահովելու մասնաճյուղի ռազմավարական 3 նպատակների իրականացումը. բարձրորակ կրթություն, գիտություն և նորարարություն, հանրային ներգրավում:

Մասնաճյուղն իր ստորաբաժանումների միջոցով հետևողականորեն իրականացրել է գործողությունների պլանով ամրագրված գործընթացները՝ որպես ուղենիշ ունենալով յուրաքանչյուր գործողության իրականացումից ակնկալիքները, հաջողության ցուցիչները և թիրախները, իրականացման ժամկետները:

Սույն հաշվետվությունը կազմվել է՝ հիմք ընդունելով մասնաճյուղի ֆակուլտետների և այլ ստորաբաժանումների կողմից ներկայացված հաշվետվությունները, 2023-2024 ուստարվա աշխատանքային պլանների կատարողականները, մասնաճյուղի գործունեության գնահատման արդյունքային ցուցանիշների (ԳԱՑ - 2019-2024թթ.) լրակազմը:

Լրացնել աղյուսակի համապատասխան դաշտերը:

	Բակալավր																													
Ցուցիչ	**ՀԼԳ**		**Պ**		**Հ**		**ՏՄՄ**		**ԱԼԳ**		**ՖԼԳ**		**ՌԼԳ**		**Ֆին.**		**Զբ.**		**ԻԿՄ**		**Դիզ.**		**ԴԿԱ**		**Մագ.**				**Ընդ.**	
																									ԴՄՄ		**Գործ. վարչ.**			
	Ա	**Հ**	**Ա**	**Հ**	**Ա**	**Հ**	**Ա**	**Հ**	**Ա**	**Հ**	**Ա**	**Հ**	**Ա**	**Հ**	**Ա**	**Հ**	**Ա**	**Հ**	**Ա**	**Հ**	**Ա**	**Հ**	**Ա**	**Հ**	**Ա**	**Հ**	**Ա**	**Հ**	**Ա**	**Հ**
Լիցենզավորված ԿԾ-ների քանակ																													**12**	**7**
Չբացված ԿԾ-ների քանակ																													**9**	**6**
Պլանային տեղերի քանակ	20	15	30	20	20	20	25	20	35	-	10	-	20	-	40	30	25	20	35	-	15	-	15	-	-	25	-	25	**290**	**175**
Դիմորդների քանակ	10	-	15	17	20	14	7	8	21	-	6	-	9	-	45	35	28	31	25	-	16	-	14	-	-	20	-	14	**216**	**139**
Ընդունվածների քանակ	8	-	10	4	12	3	6	4	20	-	4	-	8	-	33	10	14	11	17	-	16	-	13	-	-	19	-	13	**161**	**64**
Ընդունված օտարերկրացիների քանակ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	**0**	**0**
Միջին ՄՈԳ	15.07	10.59	14.18	9.83	16.14	12.19	15.09	13.74	14.16	-	16.45	-	16.42	-	13.33	10.36	13.73	11.06	13.19	9.07	15.52	-	15.95	-	-	17.46	-	15.94		

Ավարտական աշխատանքների միջին գնահատական			18	-	16.8	11.2	16.9	13.1	15.9	14.4	16.9	-	19.8	-	19	-	14.8	11.2	15.2	13.5	15.2	9.3	18.6	-	19.3	-	-	18.4	-	-		
Ասպիրանտուրա	Ընդունվածներ	անվճար																														
		վճարովի																														
		հեռակա																														
	Թեկնածուական ատենախոսություն պաշտպանածների քանակ																															
Հայցորդ ձևակերպվածների քանակ																																
Թեկնածուական ատենախոսություն պաշտպանած հայցորդների քանակ																																

1.Դիմորդների մասնագիտական կողմնորոշում և ընդունելություն

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնաճյուղի դիմորդները հիմնականում Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների շրջանավարտներն են (2023թ. ընդունելության արդյունքներով այն կազմել է ընդհանուր դիմորդների 98.1%-ը հիմք՝ ԳԱՑ 2019-2024թթ.) մասնաճյուղի կողմից դիմորդների հավաքագրման ուղղությամբ Տավուշի մարզի դպրոցներում իրականացվել են մասնագիտական կողմնորոշման և աշակերտների շրջանում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի, նրանում իրականացվող բարձրորակ կրթության և ուսանողական բովանդակալից կյանքի վերաբերյալ մի շարք աշխատանքներ: Դրանց թվում են աշակերտների ճանաչողական այցերը մասնաճյուղ, մասնաճյուղի ներկայացուցիչների այցերը դպրոցներ, աշակերտների համար կազմակերպվող առարկայական օլիմպիադաներն ու ինտելեկտուալ խաղերը, նրանց մասնակցությունը մասնաճյուղում տարբեր դասընթացների, նրանց տրամադրվող գովազդային բուկլետներն ու տարատեսակ ուղեցույցները և այլն: Մասնավորապես.

1. 2023-2024 ուսումնական տարում նախապես հաստատված ժամանակացույցով Տավուշի և Գեղարքունիքի մարզերի հանրակրթական դպրոցների 11-րդ և 12-րդ դասարանի աշակերտների հետ **կազմակերպվել է 65 հանդիպում**, որի ընթացքում ներկայացվել են ԵՊՀ ԻՄ մասնագիտություններն ու կրթական ծրագրերը, տրվել մասնագիտական խորհրդատվություն, վեր հանվել բարձրագույն մասնագիտական կրթության նկատմամբ 2024թ. շրջանավարտների դրսևորված հետաքրքրությունները, գնահատվել Մասնաճյուղի մրցակցային առավելություններն ու հնարավորությունները:

2. Մասնագիտական ամբիոնների ուժերով Իջևանի, Դիլիջանի և Նոյեմբերյանի **16 դպրոցներում կազմակերպվել է 26 դասախոսություն** «Հայոց լեզու», «Գրականություն», «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Անգլերեն», «Հայոց պատմություն» և «Արվեստ» առարկաների շրջանակներում: Դասախոսությունների համար ընտրվել են ծրագրային և արդիական, դպրոցականների համար հետաքրքրություն ու մոտիվացիա առաջացնող մի շարք թեմաներ՝ նպատակ ունենալով լրացնելու կամ ընդլայնելու աշակերտների ունեցած գիտելիքները: Դասախոսությունների որոշ մասն էլ իրականացվել է՝ կարևորելով դպրոցների կողմից նախապես առաջարկված թեմաները: Այդ կերպ «Տարիքային հոգեբանություն» թեմայով դասախոսություն է իրականացվել նաև Աչաջուր գյուղի միջնակարգ դպրոցի ուսուցիչների համար, քննարկվել գործընթացներ և վարքագիծ, որոնք կապված են ուսուցման և տարիքային առանձնահատկությունների հետ:

3. «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի «Հոգեբանություն» կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանողները Բերդի և Դիլիջանի ավագ դպրոցների, Իջևանի վարժարանի, Հաղարծին և Ազատամուտ գյուղերի միջնակարգ դպրոցների 2024թ. **շրջանավարտների շրջանում կատարել են մասնագիտական կողմնորոշման**

թեստավորման աշխատանքներ: Կատարված աշխատանքի նպատակն էր նախ պարզել աշակերտների հետաքրքրությունների շրջանակը, կարողությունների զարգացման մակարդակը, անհատական հատկանիշները, իսկ արդյունքների քննարկմամբ՝ նաև համապատասխանությունը ընտրած մասնագիտությանը, ապա հաշվի առնելով աշակերտների անհատական առանձնահատկությունները և աշխատաշուկայի սոցիալ-տնտեսական իրավիճակը, օգնել երիտասարդներին ձևավորելու գիտակցված վերաբերմունք ապագա մասնագիտության և աշխատանքի նկատմամբ:

4. 2023-2024 ուստարվա ընթացքում Աչաջրի, Խաշթառակի, Հովքի, Այգեհովիտի միջն. դպրոցների և Իջևանի Պ. Տէվէճեանի անվան տարածաշրջանային քոլեջի շրջանավարտների համար կազմակերպվել են **ճանաչողական այցեր**, որոնց ընթացքում մասնակիցները ծանոթացել են մասնաճյուղի կառուցվածքին, ֆակուլտետների հնարավորություններին, առանձնահատկություններին, կրթական ծրագրերին, հանդիպումներ ունեցել դեկանների, ամբիոնի վարիչների և կրթական ծրագրերի ղեկավարների հետ, քննարկել կրթական ծրագրերի առանձնահատկությունները, աշխատաշուկայի պահանջները, մասնաճյուղի շրջանավարտների հնարավորությունները, լսել դասախոսություններ նախընտրած դասընթացներից:

ՄՄՈՒՀ շրջանավարտներին տրվել է նաև տեղեկատվություն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում ուսումնառության ընթացքում բարձր առաջադիմություն ցուցաբերած (միայն «լավ» և/կամ «գերազանց» գնահատականներ ունեցող) շրջանավարտների՝ հեռակա ուսուցմամբ երկրորդ կուրսում նախընտրած մասնագիտությամբ ուսումը շարունակելու ընթացակարգի վերաբերյալ:

5. Մայր բուհի նախաձեռնությամբ 2024 թվականին մասնաճյուղը մարզի աշակերտների համար կազմկերպել է **առարկայական օլիմպիադաներ**: «ԵՊՀ օլիմպիադա-2024»-ի շրջանակներում Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններից մասնակցության հայտ է ներկայացրել 30 դպրոցի 12-րդ դասարանի 147 աշակերտ, որից 2-րդ փուլ է անցել 9 առարկայից 29 աշակերտ (մասնակիցների գրեթե 19%-ը): Երևանի պետական համալսարանում կազմակերպված II փուլի արդյունքներով 2 աշակերտ արժանացել է I կարգի դիպլոմի (աշխարհագրություն, հայոց լեզու և գրականություն առարկաներից), 5 աշակերտ՝ գովասանագրի (աշխարհագրություն, գերմաներեն հայոց լեզու և գրականություն, ֆրանսերեն առարկաներից) :

6. Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ ԻՄ պրակտիկայի կազմակերպման և շահակիցների հետ համագործակցության բաժնի և Ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ հանրակրթական 4 դպրոցներում (Իջևանի Գ.Անանյանի անվան ավագ դպրոց, Իջևանի վարժարան, Գանձաքարի միջն. դպրոց, Աչաջրի միջն. դպրոց) և մասնաճյուղում կազմակերպվել է **«Ամենախելացին» ինտելեկտուալ խաղը**, որին մասնակցել են 11-րդ դասարանից **46 աշակերտ**: Խաղում հաղթողները պարգևատրվել են մեդալներով, պատվոգրերով և նվերներով:

7. Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և պաշտոնական կայքէջում հրապարակվել է Մասնաճյուղի գործունեությունը և 2024թ. ընդունելության մասնագիտությունները ներկայացնող **«Դիմորդ 2024» ուղեցույցը**: «Արաքս» հրատարակչությանը տրամադրվել է մասնաճյուղի ընդունելության վերաբերյալ տեղեկատվություն՝ **«Հայաստանի բուհերի դիմորդների համար տեղեկատու»**-ում հրապարակելու համար:

Նշենք, որ մասնագիտական կողմնորոշման և դեպի մասնաճյուղ դիմորդների հոսքն ավելացնելու նպատակով մասնաճյուղը հաշվետու ուստարվա սկզբին նախաձեռնել է մարզի աշակերտների համար նախապատրաստական դասընթացների իրականացման գործընթաց: Մասնաճյուղի կայքէջում այդ մասին հրապարակվել է հայտարարություն, սակայն 2023-2024 ուստարվա ընթացքում նախապատրաստական դասընթացներ չեն կազմակերպվել՝ դիմորդների բացակայության պատճառով (առայժմ դիմորդները նախընտրում են կրկնուսույցների մոտ անհատական պարապմունքները):

2023-2024 ուստարում մասնագիտական կողմնորոշման աջակցության և խորհրդատվական գործընթացների արդյունքում 2024-2025 ուստարվա բակալավրի առկա ուսուցմամբ մասնաճյուղն ունեցել է առաջին հայտով 217 դիմորդ, լրացուցիչ (թափուր) փուլով՝ 6 դիմորդ, հեռակա ուսուցմամբ՝ 102 դիմորդ:

2023-2024 ընդունելության մրցույթի արդյունքներով անվճար ուսուցման համակարգ ընդունվել է 45 դիմորդ, այսինքն մասնաճյուղը չի ունեցել պլանային անվճար թափուր տեղեր, վճարովի ուսուցման համակարգ ընդունվել է 116 դիմորդ առաջին հայտով և 7 դիմորդ լրացուցիչ (թափուր) տեղերի մրցույթով:

Բակալավրի հեռակա ուսուցման ընդունելության մրցույթի արդյունքներով ընդունվել է 32 դիմորդ (ընդհանուր դիմորդների 31.4%-ը): Ցուցանիշը պայմանավորված է դիմորդների ոչ պատշաճ պատրաստվածությամբ:

Մագիստրատուրայի կրթական ծրագրերով 2023-2024 ուստարում Մասնաճյուղն ունեցել է 34 դիմորդ, 32 ընդունված (դիմորդների 94.1%-ը):

ՄՄՈՒՀ-երի բարձր առաջադիմություն ցուցաբերած (միայն «Լավ» և/կամ «Գերազանց» գնահատականներ ունեցող) շրջանավարտներից համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու համար 2023-2024 ուստարում մասնաճյուղ են դիմել 33 դիմորդ, որոնցից ընդունվել են 11-ը (դիմորդների մեկ երրորդ մասը՝ 33,3%), իսկ 2024-2025 ուստարում 22 պլանային տեղի համար՝ 48 դիմորդ, ընդունվել են 23-ը (48%):

Ընդունելության բարելավման և նոր արդյունքներ գրանցելու համար նախատեսվում են հետևյալ աշխատանքները՝

- ✓ հաճախակի դարձնել հանրակրթական դպրոցներում կազմակերպվող դասախոսությունները,

- ✓ հաճախակի դարձնել ճանաչողական այցերը և ապահովել մասնակիցների ավելի մեծ շրջանակ,
- ✓ Իջևանի տարածաշրջանի հանրակրթական դպրոցներում կազմակերպել առարկայական մրցույթներ,
- ✓ կազմակերպելել դիմորդների գիտելիքների ստուգում և խորհրդատվություն:

2. Կրթական ծրագրեր

Հաշվետու ուստարում մասնաճյուղն ուսուցում է իրականացրել առկա ուսուցման **բակալավրի 12, հեռակա ուսուցման 6 և մագիստրոսական 2 կրթական ծրագրերով**:

2023թ. սեպտեմբերից **ներդրվել է հեռակա ուսուցման «Գործարար վարչարարություն» մագիստրոսական կրթական ծրագիրը:**

Համակարգվել և իրականացվել են կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) և պարբերական վերանայման գործընթացները: Համաձայն «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման» կարգի և ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանի՝ Մասնաճյուղում հաշվետու ուստարում ձևավորվել է 5 աշխատանքային խումբ՝ «Պատմություն», «Հոգեբանություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրերի մշտադիտարկման համար:

Համաձայն ԵՊՀ ԻՄ տնօրենի «Բակալավրի կրթական ծրագրերի վերանայման նպատակով աշխատանքային խմբեր հաստատելու» և «Մագիստրոսական կրթական ծրագրերը վերանայող աշխատաքնային խմբերը հաստատելու» մասին հրամանների՝ մասնաճյուղում ձևավորվել են 14 աշխատանքային խմբեր: Գործընթացներն արդյունավետ իրականացնելու համար կրթական ծրագրերի ղեկավարներին տրամադրվել է անհրաժեշտ խորհրդատվություն և աշխատանքային պլանի օրինակելի ձև:

Հաշվետու ուստարում վերանայման գործընթացի ժամանակ բոլոր կրթական ծրագրերում **ներդրվել են դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ՝** ըստ կրթական ծրագրի սահմանած վերջնարդյունքների: Մասնաճյուղի Կրթական բարեխումների բաժնի կողմից մշակվել և բոլոր կրթական ծրագրերում ներդրվել է **շրջանավարտների ընդհանրական կոմպետեցիաների պարտադիր կազմը:**

09.12.2023թ. ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի թիվ 69 նիստում №69/3 որոշմամբ հաստատվել է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի մասնագիտության կրթական ծրագրերի բենչմարքինգի իրականացման կարգը:

Մասնաճյուղում նոր կրթական ծրագրեր ներդնելու և, մասնավորապես, Բնական գիտությունների ֆակուլտետի գործունեությունը ընդլայնելու համար ֆակուլտետի ամբիոնների աշխատակազմերը 2024թ. ապրիլից աշխատել են «Ակտուրական և ֆինանսական մաթեմատիկա» բակալավրի կրթական ծրագրի ներդրման ուղղությամբ:

Քննարկվում է նաև «Ֆինանսական մաթեմատիկա» մագիստրոսի հեռակա ուսուցմամբ կրթական ծրագրի ներդրման հարցը:

3. Ուսանողների հաջողությունները

2023-24 ուստարում մասնաճյուղում գրանցված առաջադիմության միջին տարեկան ցուցանիշը առկա ուսուցման համակարգում կազմել է 72% (նախորդ ուստարում՝ 78.2%), հեռակա ուսուցմամբ բակալավրիատում՝ 29.35%, մագիստրատուրայում՝ 84%: Նշենք, որ առաջադիմության ցուցանիշներում առկա է նվազման միտում, և այդ ցուցանիշը հետևանք է առանձին ֆակուլտետներում (բացառությամբ կիրառական արվեստի ֆակուլտետի) առաջադիմության նվազման. հումանիտար գիտությունների ֆակուլտետ՝ 86.9% (նախորդ ուստարում 89.6%), տնտեսագիտության ֆակուլտետ՝ 68.18% (նախորդ ուստարում՝ 78.3%), բնական գիտությունների ֆակուլտետ՝ 43.75% (նախորդ ուստարում՝ 64.5%), կիրառական արվեստի ֆակուլտետ՝ 89.28%(նախորդ ուստարում՝ 80.2%):

Առաջադիմության ցուցանիշի նվազումը բոլոր ֆակուլտետներում պայմանավորված է նաև գնահատման նոր չափանիշների ներդրմամբ, գնահատման տարբեր բաղադրիչներով միավորների անհրաժեշտ սահմանը հաղթահարելու (որը վերջին կարգով բարձրացվել է 8-ից 10 միավոր) և անհրաժեշտ առաջադրանքները կատարելու դժվարությամբ: Գնահատման նոր կարգը քայլ է ուսանողների ձեռքբերումների գնահատաման գործում օբյեկտիվության բարձրացման ուղղությամբ, սակայն այն նաև առաջ է բերել կազմակերպչական և վրահսկողական տարբեր խնդիրներ:

Ինչպես նկատեցինք, հաշվետու ուստարում (նաև նախորդ ուստարիներին) առաջադիմության ցածր արդյունք է գրանցվել բնական գիտությունների ֆակուլտետում, ինչը հավանաբար պայմանավորված է դպրոցական գիտելիքների ցածր մակարդակով մի կողմից, մյուս կողմից ծրագրի մաթեմատիկական մասի յուրացման բարդությամբ: Ուսանողների մոտ դիտվում է մոտիվացիայի պակաս, չնայած որ ծրագիրը հնարավորություն է տալիս ձեռք բերել մասնագիտական անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ, իսկ աշխատաշուկան առաջարկում է նաև առցանց աշխատելու հնարավորություններ:

Բոլոր ֆակուլտետներում առաջադիմության ցուցանիշը բարելավելու համար ձեռնարկվում են անհրաժեշտ քայլեր, մասնավորապես բնական գիտությունների ԻԿՄ կրթական ծրագրի մասնագիտական դասընթացների համար ավելացվել են գործնական դասընթացների ժամաքանակները, դասընթացների բովանդակությունը ուղղորդվել է պրակտիկ գիտելիքների և կարողությունների ձևավորմանը, ինքնուրույն, հետազոտական և ավարտական աշխատանքների շրջանակներում պարտադիր պահանջվում են պրակտիկ մշակումներ և ծրագրային իրականացումներ:

Ուսման առաջադիմության բարձրացման գործում իրենց կարևոր ներդրումն ունեն բոլոր կրթական ծրագրերի մասնագիտական պրակտիկաները, որոնց ծրագրերը

պարբերաբար վերանայվում են և ուղղորդվում ուսանողների մասնագիտական կարողությունների զարգացմանը, նաև ընդլայնվում է պրակտիկաների իրականացման վայրերի ցանկը՝ ներառելով համապատասխան ոլորտային նոր կազմակերպություններ:

Ուսման առաջադիմության հարցում մասնաճյուղն առավել ընդգծված խնդիր ունի հեռակա ուսուցման համակարգում, որի ցուցանիշները բոլոր կրթական ծրագրերի համար ցածր են, և այստեղ իրենց ազդեցությունն ունեն մեծաթիվ բացակայությունները՝ պայմանավորված ուսանողների մեծ մասի աշխատանքային զբաղվածությամբ, բազային գիտելիքների ցածր մակարդակով և այլ օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով:

2023-24 ուստարում առկա ուսուցման բակալավրիատի 649 ուսանողից 194-ը (29.9%-ը) գրանցել է 85%-ից բարձր ՄՈԳ, 308 ուսանող (47.5%) բարելավել է ՄՈԳ-ը, որը նախորդ ուստարվա համեմատ բարձր ցուցանիշ է, իսկ ՄՈԳ-ը իջեցրած ուսանողների բաժնեմասը կազմել է 25.7% (167 ուսանող):

Առկա և հեռակա ուսուցման **277 շրջանավարտներից 95-ը (34.2%) մասնաճյուղն ավարտել է գերազանցության դիպլոմով,** որը նույնպես նախորդ տարիների համեմատ (28%, 23%, 16%, 18%) շատ բարձր ցուցանիշ է:

2023-2024 ուստարում մասնաճյուղն ունեցել է 13 մագիստրոս, որից 7-ը (53.8%) ավարտել են գերազանց առաջադիմությամբ:

Այս թվերը վկայում են ուսման մեջ ուսանողների ձեռքբերումների, ակտիվության և նպատակադրվածության մասին:

Ապահովվել է ուսման լավ առաջադիմություն և այդ հաջողությունը կարող ենք վերագրել տարիների ընթացքում մասնաճյուղում կայուն ներդրված և հետևողականորեն իրականացվող գործընթացներով, ինչպիսիք են.

- ✓ դասախոսների կողմից դասավանդման, ուսումնառության և գնահատման նոր մեթոդների կիրառումը,
- ✓ արդյունավետ իրականացվող մասնագիտական պրակտիկաները և նրանց անընդհատ ընդլայնվող ցանկը,
- ✓ պարբերաբար վերանայվող կրթական ծրագրերը, որոնցում մասնագիտական դասընթացների համար ավելացվել են գործնական դասընթացների ժամաքանակները և դասընթացների բովանդակությունն ուղղորդվել է պրակտիկ գիտելիքների և կարողությունների ձևավորմանը:

Ուսանողների մոտիվացիայի բարձրացրացմանը նպաստում է այն, որ նրանց մի մասը ուսմանը զուգահեռ կարողանում է նաև աշխատել մասնագիտությամբ. այդ օրինակները շատ են ԻԿՄ, Զբոսաշրջություն, Ֆինանսներ, Դեկորատիվ-կիրառական արվեստ կրթական ծրագրերի համար: Նշենք, որ **մասնաճյուղի 2024 թ-ի 277 շրջանավարտներից 120-ը (43.3%) արդեն աշխատում են**, որից 74-ը հեռակա ուսուցման (44%) և 46-ը առկա ուսուցման (42.2%) համակարգից են և նրանց հիմնական մասն աշխատում է իր մասնագիտությամբ:

Հատկապես պետք է նշել մասնաճյուղի ձեռքբերումները ԻԿՄ կրթական ծրագրի շրջանավարտների զբաղվածության և մարզի աշխատաշուկայում նրանց պահանջվածության գործում: ԻԿՄ կրթական ծրագրի ուսանողները՝ հատկապես վերջին կուրսերի, հիմնականում աշխատում են մարզում գործող ծրագրավորման ընկերություններում՝ «LT Coding» ՍՊԸ, «Զուրաբյանս» ՓԲԸ, «Էլմասիս» ՍՊԸ, Իջևանում թվային անվտանգության կրթական և արձագանքման կենտրոն, նաև աշխատում են մարզում գործող «Արմաթ» ինժեներական լաբորատորիաներում որպես խմբավարներ:

Մյուս կրթական ծրագրերի շրջանավարտները հիմնականում աշխատում են դպրոցներում՝ ուսուցիչներ, բանկերում՝ սպասարկման մասնագետներ, Հասարակական կազմակերպություններում, ցանցային սպասարկման ծառայություններում, զբոսաշրջային գործակալություններում, հյուրանոցային և ռեստորանային համալիրներում:

Մասնաճյուղի ՈՒսումնական գործընթացի կազմակրպման և վերահսկողության բաժինը հաշվետու ժամանակահատվածի կտրվածքով վերլուծություն է իրականացրել ուսանողների հոսունության վերաբերյալ:

2023-2024 ուստարում **հեռացվել է 50 ուսանող, վերականգնվել է 63 ուսանող,** այլ բուհերից **մասնաճյուղ է տեղափոխվել 9 ուսանող**, **այլ բուհ է տեղափոխվել 6 ուսանող**:

Ուսանողները մասնաճյուղից հեռացվել են հիմնականում ուսման վարձը չվճարելու և անբավարար առաջադիմության պատճառով:

Այլ բուհերից տեղափոխության պատճառ են հանդիսանում բնակության վայրը փոխելը, մասնաճյուղի կրթական ծրագրերի հարմար վարձավճարները, ԵՊՀ դիպլոմ ստանալը, տարածաշրջանում մասնաճյուղի հեղինակությունը:

Հեռացումների թիվը նվազեցնելու նպատակով պլանավորում ենք՝

- ✓ անբավարար առաջադիմություն ցուցաբերած ուսանողների համար ավելացնել դասախոսական խորհրդատվությունները,
- ✓ օգտագործել լավագույն ուսանողների ուժը՝ նրանց աջակցելու և օգնելու համար:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողների կողմից պարբերաբար իրականացվում են ինտելեկտուալ և հասարակական միջոցառումներ:

- ✓ ԵՊՀ ԻՄ պրակտիկաների կազմակերպման և շահակիցների հետ համագործակցության բաժնի և Ուսանողական գիտական ընկերության համագործակցությամբ **մարզի շուրջ 7 դպրոցներում իրականացվել է «Ամենախելացին» ինտելեկտուալ խաղը**: Գործընթացի նպատակն էր նախ խթանել աշակերտների կրթությանը, ապա նաև խթանել մասնաճյուղի մարքեթինգային գործունեությանը:
- ✓ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի և «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության միջև կնքված փոխըմբռնման հուշագրի հիման վրա ԵՊՀ

ԻՄ «Հոգեբանություն» մասնագիտության առկա ուսուցման 3-րդ և 4-րդ կուրսի ուսանողները մասնագիտական պրակտիկայի շրջանակներում «Հույսի կամուրջ» կազմակերպության սոցիալական մանկավարժների հետ «Լոֆթ Իջևան»-ում անց են կացրել «**Միասին ապրել, միասին սովորել» խորագրով համադպրոցական ինտելեկտուալ խաղ-մրցույթը**:

2024 թ. հունիսի 11-ին Իջևանի «Վերնատուն» պատկերասրահում հանդիսավոր կերպով բացվել է **ԵՊՀ ԻՄ կիրառական արվեստի ֆակուլտետի դասախոսների, ուսանողների և շրջանավարտների հեղինակային աշխատանքների ցուցահանդեսը**, որն իրականացվել էր ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի և «Ռեստարտ Իջևան» գիտակրթական-հասարակական կազմակերպության համագործակցությամբ: Ցուցահանդեսի կազմակերպման գործում մեծ դեր է ունեցել ԵՊՀ ԻՄ «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանող Էրիկ Ամյանը:

2023-2024 ուսումնական տարում մասնաճյուղում իրականացվել է **վոլեյբոլի մասնաճյուղային առաջնություն, բաթմինթոնի բաց առաջնություն, սեղանի թենիսի բաց առաջնություն, վոլեյբոլի մասնաճյուղային առաջնություն:** Վերոնշյալ սպորտային միջոցառումներին մասնակցել են մարզի պետական և կրթական հաստատությունների ներկայացուցիչներ, համայնքային թիմեր: Իրենց ակտիվ մասնակցությունն են ունեցել մասնաճյուղի ուսանողները:

2023 թվականի սեպտեմբեր ամսին մասնաճյուղի ղեկավարության և մասնաճյուղի Ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ **ուսանողներն ակտիվ ներգրավվել են Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցներին աջակցելու և օգելու կամավորական աշխատանքներում:**

2024 թվականի մայիսին տեղացած հորդառատ անձրևներից Դեբեդ և Աղստև գետերի վարարումների հետևանքով **աղետի գոտի ճանաչված Ալավերդի քաղաքում** անհրաժեշտ **կամավորական աշխատանքներում իրենց ակտիվ մասնակցությունն են ունեցել ԵՊՀ ԻՄ մի քանի տասնյակ ուսանողներ:**

«Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրի III կուրսի ուսանող Էրիկ Ամյանը 2023 թ. սեպտեմբերից ԻննոԻջևան նորարական ՀԱԲ-ի հետ համատեղ համագործակցությամբ Իջևանի տարածաշրջանի 6-12 տարեկան երեխաների համար կազմակերպում է նկարչության դասընթացներ՝ կիրառական արվեստի ճյուղերին և նկարչությանը ծանոթացնելու նպատակով:

Վերջին երկու տարիներին մասնաճյուղում ըստ կարգի անց է կացվում «Տարվա ուսանող» մրցույթը: 2023-2024 ուստարվա երկրորդ կիսամյակում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի «Տարվա ուսանող» ամենամյա մրցույթին մասնակցության հայտ են ներկայացրել երկու ուսանող՝ «Ռուսերեն լեզու և գրականություն» և «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրերից: Նրանք ըստ կարգի ներկայացրել են համապատասխան փաստաթղթեր միջազգային գիտաժողովների ակտիվ մասնակցության

և տարբեր գիտաժողովներում զեկուցումներով հանդես գալու վերաբերյալ: Նշենք, որ քիչ առավելությամբ մրցույթի հաղթող ճանաչված «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանող Սահակ Գուլակյանը համահեղինակությամբ հոդված է հրապարակել ազդեցության գործակցով արտասահմանյան պարբերականում (Սկոպուս):

ԵՊՀ ԻՄ «Տարվա ուսանող» մրցույթի **հաղթող ճանաչվող ուսանողը պարգևատրվել է արծաթե մեդալով և հավաստագրով, հաղթողի հավակնորդ ճանաչված ուսանողը՝ հավաստագրով**:

Օրերս ստացվեց ԿԳՄՍ նախախարի հրամանը, համաձայն որի 2024թ. «Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողներ Սահակ Գուլակյանը և Նազելի Եսայանը հաղթող են ճանաչվել բնագիտական /1-ին տեղ/ և հումանիտար գիտությունների /3-րդ տեղ/ ոլորտներում, համապատասխանաբար:

Լավագույն ուսանող ամենամյա մրցույթի արդյունքները և պարգևատրումները հանգեցրել են ուսանողների շրջանում հետազոտական աշխատանքների իրականացման մոտիվացիայի բարձրացմանը, ինչի արդյունքում 2023-2024 ուստարում մասնաճյուղի ավելի քան 10 ուսանողներ՝ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների համահեղինակությամբ իրականացրել են հետազոտական աշխատանքներ, հանդես են եկել զեկուցումներով՝ տարբեր միջազգային և հանրապետական գիտաժողովներում և ունեն հրապարակված հոդվածներ:

Մասնաճյուղի ուսանողները հաշվետու ժամանակահատվածում գրանցել են հաջողություններ նաև տարբեր միջազգային մրցույթներում.

- ✓ Ռուսաստանի Դաշնության Նիժնի Նովգորոդ քաղաքում իրականացված «Տարվա ուսանող - 2023» միջազգային մրցույթի 5 անվանակարգերում «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի 3-րդ կուրսի մեկ ուսանող արժանացել է 1-ին, 2-րդ և 3-րդ կարգի դիպլոմների, ով նաև ճանաչվել է ԵՊՀ ԻՄ տարվա լավագույն ուսանող:
- ✓ Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի Երևանի մասնաճյուղում «Տարվա լավագույն ուսանող» մրցույթի անվանակարգերից մեկում «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի մեկ ուսանող արժանացել է մրցանակի, ով ճանաչվել է նաև ԵՊՀ ԻՄ «Տարվա ուսանող» մրցույթի հաղթողի հավակնորդ:
- ✓ Ուրալի պետական համալսարանում իրականացված «Ռուսական տարածաշրջանառությունները փոփոխման կենտրոնում» թեմայով միջազգային XVIII համաժողովին մասնակցության արդյունքում ԵՊՀ ԻՄ «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի 2 ուսանողներ արժանացել են 1-ին կարգի դիպլոմների:

ԵՊՀ ԻՄ ուսանողները ներգրավվում են նաև մասնաճյուղի կողմից հայտարարված ներքին դրամաշնորհներում՝ յուրաքանչյուր դրամաշնորհի մասնակցում է առնվազն մեկ ուսանող: 2023-2024 ուստարում մասնաճյուղում իրականացվել է երկու ներքին դրամաշնորհային ծրագիր, որոնց մասնակցել է 4 ուսանող:

2023-2024 ուստարում Էրազմուս+ ծրագրին մասնակցել են ԵՊՀ ԻՄ 3 ուսանողներ.

- ✓ «Անգելերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի չորրորդ կուրսի ուսանողուհի Վիկա Հակոբի Մելիքբեկյանը 27.09.2023թ. - 09.02.2024թ. ուսուցումն իրականացրել է Պոմերանիայի համալսարանում (Լեհաստան, ք. Սպուլսկ):
- ✓ «Անգելերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի երկրորդ կուրսի ուսանողուհի Ռաիսա Նիկոլայի Փիրումյանը 01.02.-05.07.2024թ. ուսուցումն իրականացրել է Վալյադոլիդի համալսարանում (Իսպանիա):
- ✓ «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի երրորդ կուրսի ուսանողուհի Արաքսի Նիկոլայի Միսկարյանը 01.03.-31.08.2024թ. ուսուցումն իրականացրել է Աաենի համալսարանում (Գերմանիա):

4. Կրթության երրորդ աստիճան

Բարձրագույն կրթության երրորդ աստիճանում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը կրթական ծրագրեր չի իրականացնում:

5. Ակադեմիական համակազմի նկարագիր և կարողությունների զարգացում

Ակադեմիական համակազմի ընդհանուր պատկերի գնահատում

2023-24 ուստարվա ընթացքում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ակադեմիական համակազմն ունեցել է բազմազան սեռատարիքային կազմ՝ ընդգրկելով թե՛ երիտասարդ դասախոսներ, թե՛ ավելի փորձառու կադրեր:

Հաշվետու ուստարում մասնաճյուղում դասավանդել է 179 դասախոս, այդ թվում՝ գիտությունների 9 դոկտոր և 79 թեկնածու, որը կազմում է ընդհանուր դասախոսական կազմի 49.1 %-ը: Հարկ է նշել, որ վերոնշյալ դասավանդողների մեջ մեծ թիվ են կազմում մասնաճյուղի նախկին շրջանավարտները, ինչը խոսում է մասնաճյուղի կադրային քաղաքականության կարևոր մոտեցման՝ ուսումնական գործընթացում հաջողությունների հասած երիտասարդների ներգրավման և նրանց աջակցման մասին:

Մինչև 35 տարեկան դասախոսների թիվը 39 է. դա վկայում է երիտասարդ մասնագետների ներգրավման ուղղությամբ շարունակական ջանքերի մասին: Ակադեմիական համակազմում մեծ թիվ են կազմում 36-63 տարեկան դասախոսները՝

իրենց փորձառությամբ և գիտական գործունեությամբ, ովքեր համարվում են ուսումնական գործընթացի և գիտական առաջընթացի կարևոր շարժիչ ուժը:

Կարողությունների զարգացման գործընթացը

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ ԻՄ-ն ակտիվորեն նպաստել է ակադեմիական կազմի կարողությունների զարգացմանը՝ կազմակերպելով ներքին դրամաշնորհային մրցույթներ և խրախուսելով հետազոտական գործունեությունը: Այս ծրագրերը հնարավորություն են տալիս դասախոսներին իրականացնել նորարարական հետազոտական նախագծեր, ստանալ ֆինանսական աջակցություն, խթանել մասնաճյուղում գիտահետազոտական գործունեությունը և նպաստել դասախոսների և ուսանողների առաջխաղացմանը: Չնայած բարեհաջող իրականացվող դրամաշնորհային ծրագրերին, այնուամենայնիվ, անհրաժեշտ է հետագա քայլեր ձեռնարկել գիտահետազոտական աշխատանքների որակի բարձրացման ուղղությամբ, մասնավորապես, ընդլայնել միջազգային համագործակցության շրջանակը՝ արտասահմանյան բուհերի լավագույն մասնագետներից փորձի փոխանակման և գիտական հմտությունների զարգացման նպատակով:

Մասնաճյուղում ԿԲԴՎ բաժնի կողմից պարբերաբար իրականացվում են դասախոսների վերապատրաստման դասընթացներ: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է վերապատրաստման 14 դասընթաց, որոնց մասնակցել են մասնաճյուղի շուրջ 146 աշխատակիցներ և դասախոսներ, այդ թվում վարչական և ուսումնաօժանդակ կազմից շուրջ 60 աշխատակից: Հաշվետու ժամանակահատվածում 2-10 ակադեմիական ժամ տևողությամբ իրականցվել են վերապատրաստման դասընթացներ «Աշխատանք վիրտուալ կրթական միջավայրում», «Թվային և տեղեկատվական անվտանգություն հիմունքներ», «Ինքնուրույն աշխատանքների կատարման մեթոդական ցուցումներ», «Ներառական կրթություն», «Գնահատում Moodle կրթական վիրտուալ միջավայրում», «Ինչպես կազմել արդյունավետ ներկայացում», «Supervision.ysu.am» ծրագրով աշխատելու հմտություն» թեմաներով:

Գիտական ակտիվության գնահատում

Հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից հրատարակվել է 33 հոդված, 1 մենագրություն, 3 ուսումնամեթոդական ձեռնարկ, կազմակերպվել է 1 գիտաժողով, իրականացվել է 4 դրամաշնորհային ծրագիր: Այս արդյունքների համեմատումը նախորդ ուստարիների ցուցանիշների հետ և դրանց վերլուծությունը ցույց է տալիս, որ ԵՊՀ ԻՄ ակադեմիական կազմի գիտական ակտիվությունը բավարար մակարդակի վրա է, մասնաճյուղի դասախոսական կազմը կայուն զբաղված է գիտական գործունեությամբ: Այս արդյունքները վկայում են, որ մասնաճյուղի վարած ֆինանսական խրախուսման քաղաքականությունը խթանում է

դասախոսական կազմի գիտական գործունեությունը: Սակայն պետք է փաստել, որ կա առաջընթացի կարիք, հատկապես միջազգային վարկանիշային պարբերականներում հրապարակումների և միջազգային գիտաժողովներում մասնակցությունների ուղղությամբ:

ԵՊՀ ԻՄ-ում գործում է «Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը: Հաշվետու ուստարում ևս անց է կացվել մրցույթը, որի արդյունքում Տնտեսագիտության ֆակուլտետի Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի դոցենտ Գ.Հովհաննիսյանը ճանաչվել է հաղթող, իսկ բնական գիտությունների ֆակուլտետի Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի դոցենտ Ս.Ազարյանը պարգևատրվել է մրցանակով:

Համահունչություն Մասնաճյուղի կարիքների հետ և հավելյալ գործողությունների անհրաժեշտություն

Գիտական ակտիվությունն ընդհանուր առմամբ համահունչ է ԵՊՀ ԻՄ գիտական կարիքներին, սակայն՝ մասնակիորեն: Հիմնական մարտահրավերը շարունակում է մնալ մասնաճյուղի գիտական դեմքը ներկայացնող սեփական ուղղությունների ձևավորումը, Հայաստանյան գիտական հանրության մեջ և միջազգային տեսանելիության ապահովումը: Դա հնարավոր է իրականացնել ԵՊՀ գիտական խմբերի հետ համագործակցությամբ, նոր կադրերի ներգրավմամբ, միջազգային համագործակցության ընդլայման, տարբեր ծրագրերում և գիտական հարթակներում մասնաճյուղի դասախոսների ակտիվ ներգրավմամբ, դրանով ստեղծելով հնարավորություններ գիտական աշխատանքների որակի բարձրացման համար: Հավելյալ գործողությունների շարքում կարևորվում են միջազգային գիտաժողովներին մասնակցության ֆինանսական աջակցությունը, ինչպես նաև հետազոտական աշխատանքների ներքին համակարգման արդյունավետության բարձրացումը:

Գիտակրթական համագործակցության նոր դեպքեր և դրանց աղդեցությունը

2023-24 ուստարում գրանցվել են գիտակրթական համագործակցության մի շարք նոր դեպքեր՝ ներառյալ արտերկրի գործընկերների հետ կազմակերպված գիտաժողովները և նորարարական նախագծերը: Այդ նախագծերի շարքում պետք է առանձնացնել, օրինակ, հաշվետու ուստարում բնական գիտությունների ֆակուլտետում իրականացված **«Տավուշի մարզում թվայնացված դրոնային համակարգի մշակում և անվտանգության համակարգի տեղադրում» միջազգային դրամաշնորհային ծրագիրը,** որի իրականացման շրջանակներում ֆակուլտետի ռոբոտաշինության լաբորատորիան ձեռք է բերել 1 դրոն, 2 դյուրակիր համակարգիչ, ռադիոդետալներ և չափիչ սարքեր:

Միջազգային համագործակցությունները նպաստում են համալսարանի գիտական ճանաչման բարձրացմանը և նոր փորձի փոխանակմանը, որը թե՛ միջնաժամկետ, թե՛

երկարաժամկետ հեռանկարում կհանդիսանա համալսարանի համար նոր հնարավորությունների աղբյուր:

2023-24 ուստարում մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները մասնակցել են տարբեր միջազգային գիտաժողովների, սեմինարների, հավաքների, փառատոնների, ֆորումների, ներգրավվել են արտասահմանյան համալսարաններում դասավանդելու և փորձի փոխանակման գործընթացներում, մասնավորապես.

- մեկ դասախոս Էրազմուս+ ծրագրի շրջանակում գործուղվել է Մինհոյի համալսարան՝ դասախոսություններ կարդալու նպատակով,
- մեկ երիտասարդ դասախոս ՌԴ Մոսկվա քաղաքում ՌԴ գիտական հաստատություններում անցել է ստաժավորում՝ «Սառը պատերազմի ազդեցությունը հասարակական-քաղաքական գործընթացների վրա Աֆղանստանում» թեմայով,
- երկու երիտասարդ դասախոսներ երկու անգամ մասնակցել են ՀՀ Ծաղկաձոր քաղաքում կազմակերպված Վիքիհավաքին,
- մեկ դասախոս ՌԴ Նիժնի Նովգորոդ քաղաքում մասնակցել է Մաքսիմ Գորկու անվան գրականության փառատոնին,
- մեկ դասախոս ՌԴ Մոսկվա քաղաքում մասնակցել է «Россия -Армения» ֆորումին,
- մեկ դասախոս ՌԴ Սոչի քաղաքում մասնակցել է Երիտասարդ գիտնականների ԱՊՀ միջազգային 3-րդ գիտաժողովին,
- մեկ դասախոս ՌԴ Սանկտ-Պետերբուրգ քաղաքում մասնակցել է «XXXVIII Кононовские чтения» միջազգային գիտաժողովին,
- մեկ դասախոս մասնակցել է Գյումրու «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի հիմնադրման 90 ամյակին նվիրված «Կրթության և գիտության արդի հիմնախնդիրները խորագրով» միջազգային գիտաժողովին,
- ԵՊՀ ԻՄ-ում 2024թ. մայիսի 24-25-ը առկա և առցանց եղանակով իրականացվել է «Զբոսաշրջության և ռեկրեացիայի հիմնախնդիրները ՀՀ-ում» խորագրով գիտաժողովը՝ նվիրված ԵՊՀ ԻՄ հիմնադրման 30-ամյակին,
- մեկ դասախոս մասնակցել է EUCulture «Մենք ենք մեր սարերը» ծրագրից ֆինանսավորվող որպես «Զարթոնք Իջևանի» դրամաշնորհային ծրագրի ղեկավար՝ ԵՊՀ պատմության ֆակուլտետում նախատեսված «Պատերազմը, սահմանը և մշակույթը» խորագրով գիտաժողովին:

Առաջարկություններ

Վերլուծելով մասնաճյուղի գիտական ձեռքբերումներն ու գիտական գործունեությունը և դիտարկելով դրանցից բխող խնդիրները մասնաճյուղը կարևորում և իր նոր ռազմավարությամբ պլանավորում է իր գիտական ներուժի հետագա զարգացման հետևյալ ուղղությունները.

- ✓ Մշակել մեխանիզմներ մասնաճյուղի հետազոտող դասախոսների՝ ԵՊՀ համապատասխան գիտական խմբերի հետ կապը ակտիվացնելու և համագործակցությունը խթանելու համար:
- ✓ Պայմաններ ստեղծել հրավիրյալ գիտնականներ ունենալու համար՝ որպես որոշակի հետազոտական ուղղությունների հիմնադիրներ:
- ✓ Շարունակել և ընդլայնել ներքին դրամաշնորհային մրցույթները՝ ավելացնելով ֆինանսական աջակցությունը:
- ✓ Խրախուսել դասախոսների մասնակցությունը արտերկրյա կոնֆերանսներին և ֆինանսապես աջակցել նրանց գործուղումներին:
- ✓ Կազմակերպել գիտահետազոտական կարողությունների զարգացման ուղղված որակավորման բարձրացման հատուկ դասընթացներ:
- ✓ Խթանել դասախոսների միջազգային վարկանիշային պարբերականներում հոդվածներ հրապարակելուն ուղղված միջոցառումները:

Այս քայլերը կօգնեն ԵՊՀ Իջևանի մասնաճյուղին ամրապնդել իր գիտահետազոտական դիրքերը, նպաստել մարզի և հանապետության զարգացմանը:

Լրացնել աղյուսակի համապատասխան դաշտերը:

Ցուցիչ		
Պրոֆեսորադասախոսական կազմն ըստ պաշտոնի	դասախոսների թիվ	60
	ասիստենտների թիվ	46
	դոցենտների թիվ	57
	պրոֆեսորների թիվ	16
Պրոֆեսորադասախոսական կազմն ըստ գիտական աստիճանի	թեկնածուների թիվ	79
	դոկտորների թիվ	9
Պրոֆեսորադասախոսական կազմն ըստ աշխատանքային պայմանագրի տեսակի	հիմնական աշխատանք	67
	ժամավճարով	64
	համատեղությամբ	48
Պրոֆեսորադասախոսական կազմն ըստ	մինչև 35 տարեկան	39

տարիքային խմբի	36-63 տարեկան	108
	64 և ավել տարեկան	32
Պրոֆեսորադասախոսական կազմն ըստ սեռի	իգական	104
	արական	75
Պրոֆեսորադասախոսական կազմի հրատարակությունների քանակ	ընդհանուր հոդվածներ	33
	ազդեցության գործակցով պարբերականներում	2
	մենագրություններ	1
	ուսումնամեթոդական ձեռնարկներ	3
Կազմակերպված գիտաժողովների քանակ		1
Ներկայացված դրամաշնորհային հայտերի քանակ		7
Ստացված դրամաշնորհների քանակ		4
Գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվածություն	գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված պրոֆեսորդասախոսական կազմի ներկայացուցիչների մասնաբաժին (տոկոս)	
	երիտասարդ գիտաշխատողների քանակ	
	գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների քանակ	

Լրացնել աղյուսակի համապատասխան դաշտերը:

Դրամաշնորհներ					
Թեմայի անվանումը	*Ֆինանսա-վորման աղբյուրը*	*Ժամկետը*	*Գումարը*	*Թեմայի ղեկավարը*	*Գործընկեր հիմնարկներ*

Պատկերի ճանաչման թվային անվտանգության համակարգի տեղադրում և վերահսկում	ԵՊՀ ԻՄ	05.01.2024-15.12.2024թ.	750.000դր.	Հովակիմյան Աննա	
Տավուշի մարզում ինտենսիվ այգու հաշվառման թվայնացված դրոնային համակարգի մշակում	ԵՊՀ ԻՄ	05.01.2024-15.12.2024թ.	750.000դր.	Յոլչյան Ռոբերտ	
«Մշակ" լրագիրը որպես առօրեականության և հասարակական գործընթացների ուսումնասիրության սկզբնաղբյուր (Ելիզավետպոլի նահանգի Ղազախի գավառի օրինակով)» ծածկագիրը	ԵԳԱԾ	01.2024-01.2025	3.580.000 դր	Պողոսյան Վլադիմիր	ԵԳԱԾ, ԵՊՀ ԻՄ
Զարթոնք Իջևանի <<EU4Culture/ICDS/CHSG- 05>>	Ուրբան կայուն զարգացման հիմնադրամ, ԵՄ և Գյոթեի ինստիտուտ	02.04.2024-01.08.2024	1.300.000 դր.	Պողոսյան Վլադիմիր	Ուրբան կայուն զարգացման հիմնադրամ, ԵՄ և Գյոթեի ինստիտուտ, ԵՊՀ ԻՄ

6. Գիտահետազոտական գործունեություն և մասնակցություն ֆինանսավորվող գիտական նախագծերին

Մասնաճյուղը չունի բազային և գիտահետազոտական այլ բնույթի լաբորատորիաներ: Գիտահետազոտական մտքի զարգացման և առաջընթացի համար անհրաժեշտ է ԵՊՀ–ից հրավիրել այնպիսի մասնագետներ, որոնք ունեն բազային և գիտահետազոտական այլ բնույթի դրամաշնորհներ շահելու փորձառություն և փորձել ԵՊՀ ԻՄ-ում ստեղծել գոնե մեկ գիտահետազոտական լաբորատորիա, դրան կարող է նպաստել նաև ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական կենտրոնի ստեղծումը՝ օգտագործելով ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ հնարավորությունները:

Հարկ է նշել, որ մասնաճյուղը յուրաքանչյուր ուստարում կազմակերպում է գոնե մեկ գիտաժողով, այդ առումով հաշվետու ուստարին նույնպես բացառություն չէր: 2023 թվականի մայիսի 24-25-ը անց է կացվել «Զբոսաշրջության և ռեկրեացիայի հիմնախնդիրները ՀՀ-ում» խորագրով գիտաժողով՝ նվիրված մասնաճյուղի հիմնադրման 30-ամյակին: Գիտաժողովն անց է կացվել առկա և առցանց ձևաչափերով՝ ներգրավելով 4 համալսարանների 19 ներկայացուցիչներ Հայաստանից և Ռուսաստանից, այդ թվում՝ ուսանողներ, դասախոսներ և գիտնականներ: Միջոցառման նպատակն էր խթանել ուսանողական հետազոտությունները, նրանց ստեղծագործական ներուժը, ինչպես նաև զարգացնել ներբուհական ու միջբուհական համագործակցությունը՝ շեշտը դնելով ՀՀ-ում ժամանակակից զբոսաշրջության և ռեկրեացիայի հիմնախնդիրների վրա: Գիտաժողովի

ընթացքում ներկայացվել են Տավուշի մարզի զբոսաշրջության զարգացման հարցերին և ՀՀ զբոսաշրջության ոլորտի ընդհանուր տեսլականին նվիրված զեկուցումներ:

Գիտաժողովների անցկացումը կարևոր նշանակություն ունի ԵՊՀ ԻՄ ընդհանուր գործունեության համար: Դրանք խթանում են ուսանողների հետազոտություններ կատարելու կարողությունները, հնարավորություն են տալիս հաստատել կապեր մասնագիտական շրջանակների հետ, նպաստում են նրանց մասնագիտական առաջընթացին: Նման գիտաժողովները ընդլայնում են Մասնաճյուղի միջազգային համագործակցությունը և ներգրավվածությունը հետազոտվող ոլորտի հիմնախնդիրների լուծման մեջ: Երկարաժամկետ հեռանկարում՝ գիտաժողովի փորձառությունները կօգնեն Մասնաճյուղին ձեռք բերել ավելի լայն ճանաչում՝ ձևավորելով մասնագիտական ցանցեր և ուժեղացնելով մասնագիտական կապերը, որոնք կնպաստեն ԵՊՀ ԻՄ զարգացմանն ու նրա դերին Հայաստանի տարբեր ոլորտների արդիականացման մեջ:

7. Գործընկերների հետ համագործակցություն

ԵՊՀ ԻՄ-ը պարբերաբար համագործակցության նոր պայմանագրեր, համաձայնագրեր, հուշագրեր է կնքում տեղական և միջազգային տարբեր բուհերի և ոլորտային կազմակերպությունների հետ և շարունակում է իր համագործակցությունը՝ նախկինում կնքված համաձայնագրերով:

Հաշվետու ուստարում Մասնաճյուղը համագործակցության համաձայնագրեր և պայմանագրեր է ստորագրել արտերկրների 5 և տեղական 4 համալսարանների և կազմակերպությունների հետ և շարունակել է համագործակցությունը. մասնավորապես՝

1. 07.11.2023թ. համագործակցության հուշագիր է ստորագրվել Նոր բուլղարական համալսարանի հետ: Կողմերը պարտավորվել են իրականացնել համատեղ կրթական, ուսուցողական և/կամ հետազոտական միջոցառումներ, կազմակերպել գիտաժողովներ, սիմպոզիումներ, սեմինարներ, փոխադարձ հրավերներ ուղարկել՝ դասախոսների, ասպիրանտների և ուսանողների մասնակցության համար:

2. 26.02.2024թ. ակադեմիական և հետազոտական համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիր է կնքվել Սլովակիայի Պրեշովի համալսարանի հետ: Այս բուհի դասախոսը անցավ վերապատրաստում Իջևանում, որի հաջող արդյունքների հիման վրա համատեղ մշակվեց Erasmus + ծրագիր: **Առաջին անգամ Իջևանի մասնաճյուղը հանդես եկավ Erasmus-ի ինքնուրույն անդամ, ինչը հնարավորություն կտա մեր ուսանողներին և դասախոսներին մասնակցել ակադեմիական շարժունության:**

3. 12.03.2024թ. փոխըմբռնման հուշագիր է կնքվել Սլովակիայի Բանսկա-Բիստրիցայի Մատեյ Բելի անվան համալսարանի հետ համատեղ կրթական, վերապատրաստման և/կամ հետազոտական գործունեության իրականացման ուղղությամբ:

4. 22.04.2024թ. համագործակցության հուշագիր է կնքվել Զալցբուրգի համալսարանի Քրիստոնյա Արևելքի հետազոտությունների ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ հնագիտության և

ազգագրության ինստիտուտի հետ: Զալցբուրգի համալսարանի հետ կազմակերպվեց միջազգային աշնանային դպրոց՝ նվիրված Տավուշի մարզի պատմամշակութային արժեքների հետազոտությանը, որին մասնակցեցին հայ և ավստրիացի ուսանողներ և երիտասարդ դասախոսներ:

5. 14.09.2023թ. համագործակցության համաձայնագիր է ստորագրվել «Հայ-ֆրանսիական բարեկամություն և փոխանակում» միության հետ, համաձայն որի միությունը կրթաթոշակ կտրամադրի “Ֆրանսերեն լեզու և գրականություն” կրթական ծրագրի ուսանողներին՝ ուսման վճարի փոխանցման ձևով և կխթանի ֆրանսերեն ուսումնասիրող ուսանողների շրջանում ֆրանկոֆոնիայի տարածումը: Նշենք, որ այդ համագործակցության արդյունքում հաշվետու ուստարում կրթաթոշակներ են տրամադրվել «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի 21 ուսանողների (13 ուսանողի 1-ին կիսամյակում և 8 ուսանողի 2-րդ կիսամյակում):

6. 08.11.2023թ. համագործակցության հուշագիր է ստորագրվել ԵՊՀ ԻՄ «Ուսանողական թվային ակումբ»-ի և «Ռեստարտ Իջևան» գիտակրթական հասարակական կազմակերպության հետ, որի նպատակն է աջակցել համալսարանում «Ուսանողական թվային ակումբ»-ին բարելավել ԵՊՀ ԻՄ ուսանողական և կրթական միջավայրի թվայնացումը:

7. 03.01.2024թ. համագործակցության համաձայնագիր է ստորագրվել «Մունետիկ» մշակութային հասարակական կազմակերպության հետ 2024 թվականին ՀՀ Տավուշի մարզի Գետահովիտ գյուղում և Տավուշի շրջակա պատմամշակութային վայրերում «Հայրենիքն իմ աչքերով» խորագրով հայրենաճանաչությանը միտված ծրագրի բոլոր փուլերին մասնակցելու վերաբերյալ:

8. 19.01.2024թ. համատեղ գործունեության պայմանագիր է կնքվել «Փրոջեքթ հարմոնի» կազմակերպության հետ: Կողմերը ԱՄՆ պետքարտուղարության Հանրային դիվանագիտության գրասենյակի դրամաշնորհի միջոցով ֆինանսավորվող «Տավուշում կրթական-տեղեկատվական դասընթացներ ծրագրի» շրջանակում համալսարանում հիմնել են ուսումնական կենտրոն: Նոր համագործակցության նպատակն է հասարակության շրջանում գիտելիքների տարածումը, նրա կրթական և մշակութային մակարդակի բարձրացումը, ինչպես նաև սովորողների մեջ քաղաքացիական դիրքորոշման, հմտությունների և աշխատանքի նկատմամբ պատասխանատվության արմատավորումը ժողովրդավարական և քաղաքացիական հասարակության կառավարման պայմաններում:

9. 12.02.2024թ. համագործակցության հուշագիր է ստորագրվել «ԴԻԼԻՋԱՆ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ» հիմնադրամի հետ: Համագործակցության շրջանակներում ԵՊՀ ԻՄ-ն Հիմնադրամի հետ համատեղ իրականացնում է զբոսաշրջության ոլորտի հետազոտական և կրթական նախագծեր, Հիմնադրամի հետ ուսանողների համար կազմակերպում պրակտիկա և գործնական դասընթացներ:

Մասնաճյուղը բարեհաջող շարունակում է համագործակցությունը տարբեր օտարերկրյա համալսարանների հետ՝ նախկինում կնքված հուշագրերի և համաձայնագրերի հիման վրա: Այդ համագործակցությունների շրջանակներում մասնաճյուղում իրականացվել են մի շարք կարևոր և ուշադրության արժանի գործընթացներ: Այդ թվում.

1. “Project Ijevan Valley EdTech Summer Scool - 2023” նախագծի շրջանակներում ԱՄՆ Այովային համալսարանի ուսանողների համար մասնաճյուղն իրականացրել է «Բազմամշակութային աշխարհում ռուսաց լեզվի և մշակույթի ուսանողների կրթության արդյունավետության բարձրացում Հայաստանում» խորագրով ամառային դպրոցը (պրակտիկան): Պրակտիկայի իրականացման շրջանակներում մասնաճյուղը 2023թ.-ի հուլիսին հյուրընկալել է Այովայի համալսարանի 9 ուսանողի և նույն համալսարանի համաշխարհային լեզուների, գրականության և մշակույթների ռուսական ծրագրի տնօրեն, ծրագրի ամերիկյան համակարգող Իրինա Կոստինային:

2. “Armenian Volunteer Network (AMVN)”/«Հայ կամավորական ցանց» համագործակցության շրջանակներում ԵՊՀ ԻՄ ուսանողները ստացել են այլընտրանքային կրթության հնարավորություն: 2023 թվականի հոկտեմբերի 25-ին ԵՊՀ ԻՄ «Անգլերեն լեզու և գրականություն» և «Ռուսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի ուսանողներին հանձնվել են այլընտրանքային առցանց դասընթացի մասնակցության հավաստագրեր:

3. 2023 թվականի նոյեմբերի 24-ից մասնաճյուղում մեկնարկել է Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցներին, մարզի բնակիչներին և համալսարանականներին անվճար հոգեբանական ծառայություններ մատուցելու գործընթացը:

4. «Հույսի Կամուրջ» ՀԿ-ի հետ համագործակցության շրջանակներում մասնաճյուղում կազմակերպվել է «Ներառական և հավասարապես որակյալ կրթություն բոլորի համար» թեմայով աշխատաժողով, որին մասնակցել են մարզի տարբեր կրթական հաստատությունների ավելի քան 200 ներկայացուցիչներ:

5. ԵՊՀ ԻՄ ուսանողական թվային ակումբի և «Ռեստարտ» ՀԿ համագործակցության շրջանակներում մասնաճյուղում գործարկվել է «Խելացի քարտեզ» սարքը, որը հնարավորություն է տալիս արագ կողմնորոշվել հաստատությունում: Նշենք, որ ԵՊՀ ԻՄ ուսանողական թվային ակումբը կազմավորվել է Ռեստարտ ՀԿ-ի կողմից կազմակերպված “The Lamp Camp” ծրագրի շրջանակներում՝ մասնաճյուղի ուսանողների կողմից:

6. Էրազմուս+ ծրագրի շրջանակներում մասնաճյուղը 2024 թվականի ապրիլի 17-19-ը հյուրընկալել է Պրեշովի համալսարանի պրոֆեսոր Աննա Պետրիկովային: Այցի երկու հիմնական նպատակներն էին փորձի փոխանակումը և համալսարանների միջև կնքված համաձայնագրերի փոխանցումը: Այցի ընթացքում իրականցվել են հանդիպումներ և դասախոսություններ Հումանիտար գիտությունների ֆակուլտետի ուսանողների համար:

7. ԵՊՀ ԻՄ Օտար լեզուների ամբիոնի վարիչի, ԱՄՆ Պետդեպարտամենտի անգլերեն լեզվի ծրագրերի Եվրասիական տարածաշրջանի ղեկավար Ջոն Սիլվերի և վերապատրաստող պրոֆեսոր Լորի Ֆարքյուհարսնի համագործակցությամբ 2024 թվականի հունիսին իրականացվել է 6 շաբաթյա ծրագիր, որին մասնակցել են «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրի 9 ուսանող:

8. 2024թ.-ի ապրիլին Զալցբուրգի համալսարանի հետ կնքված համագործակցության շրջանակներում մասնաճյուղում 2024թ. սեպտեմբերին կազմակերպվել է «Աշնանային միջազգային դպրոց»:

9. Մասնաճյուղն իր ստեղծած համագործակցությունների արդյունքում ապահովել է ոլորտային կազմակերպություններում իր ուսանողների մասնագիտական պրակտիկաների արդյունավետ իրականացումը: Այդ համագործակցությունների շրջանակներում ուսանողների համար պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ, քննարկումներ և դասախոսություններ մարզի ոլորտային և սոցիալական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, որոնք նպաստում են ուսանողների ապագա կարիերայի զարգացմանը, իրազեկում են մարզում առկա աշխատանքային հնարավորությունների, աշխատաշուկայի պահաջների և նրա փոփոխությունների մասին:

10. Համագործակցության արդյունքում Հանրային հեռուստաընկերության «Առավոտ լուսո» հաղորդաշարը պատրաստել էր հաղորդումների շարք ակտիվ գործունեություն ծավալող Մասնաճյուղի ուսանողների և դասախոսների մասին:

8. Շրջանավարտներ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի և շրջանավարտների միջև պահպանվում է ակտիվ կապ՝ շրջանավարտների հետագա գործունեությանը աջակցելու և հետևողական լինելու նպատակով:

Մասնաճյուղը համագործակցությունների միջոցով հանդիսանում է կապող օղակ շրջանավարտի և գործատուի միջև՝ անհրաժեշտ տեղեկատվության և խորհրդատվության ապահովմամբ, շրջանավարտներին թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվության հաղորդմամբ և գործատուներին՝ անհրաժեշտ մասնագետների վերաբերալ թույլատրելի տեղեկատվության տրամադրմամբ:

Մասնաճյուղը 2023-2024 ուստարվա տվյալները ներառյալ ունի 7811 շրջանավարտ: Մասնաճյուղում գործում է շրջանավարտների էլեկտրոնային բազա, որը յուրաքանչյուր տարի թարմացվում է:

Շրջանավարտների և մասնաճյուղի կապը իրականացվում է տարբեր եղանակներով՝ սոցիալական հարթակներով, էլեկտրոնային հասցեներով, բջջային կապով, անհատական հանդիպումներով:

Հաշվետու ժամանակահատվածում «ԵՊՀ ԻՄ շրջանավարտների և արտաքին շահակիցների հետ կապ» ֆեյսբուքյան էջում տեղադրվել է շուրջ հարյուր

հայտարարություն՝ մարզի թափուր հաստիքների, դրամաշնորհների, ուսումնական պրակտիկաների և ուսուցողական դասընթացների մասին: Հաստիքներ եղել են մարզում գործող բանկերում, ապահովագրական ընկերություններում, հյուրատներում, հաշվապահական գրասենյակում, սահմանափակ պատասխանատվության ընկերություններում, հասարակական կազմակերպություններում և այլուր: Ֆեյսբուքյան էջն ամենաակտիվ հարթակն է ուսանողների և շրջանավարտների համար: Էլեկտրոնային հասցեների միջոցով շրջանավարտները տեղեկացվել են հանրապետական և միջազգային գիտական մրցույթների, կրթաթոշակների և նմանատիպ այլ հայտարարությունների մասին:

Միասնական սոցիալական ծառայության Իջևանի տարածքային կենտրոնը 2020 թ.-ից հետո զորացրված շրջանավարտների համար ներկայացնում է հատուկ նախատեսված պրակտիկայի և աշխատանքի հնարավորություններ: Միասնական սոցիալական ծառայության Իջևանի տարածքային կենտրոնի կողմից կազմակերպած աշխատանքային ակումբում ընդգրկվել են ԵՊՀ ԻՄ «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի ավարտական կուրսի ուսանողները և շրջանավարտները, դասընթացների արդյունքում մասնակիցները սովորում են կազմել CV, ճիշտ ներկայանալ գործատուին:

Մասնաճյուղում շարունակվում են շրջանավարտների հետ տարվող անհատական խորհրդատվությունները:

Իրականացվել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրություն՝ առցանց հարցման միջոցով: Հարցաթերթն ուղարկվել է 125 կազմակերպությունների էլեկտրոնային հասցեներին: Հետազոտությանը մասնակցել են մարզի խոշոր կազմակերպությունների՝ հիմնականում բանկերի, դպրոցների, հյուրատների, ՏԻՄ-երի, հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների ղեկավար անձինք՝ թվով 63 շահակից: Հետազոտության նպատակն էր պարզել արտաքին շահակիցների կարծիքը շրջանավարտների մասնագիտական և անձնային որակների, ինչպես նաև մարզում պահանջարկ ունեցող մասնագիտությունների վերաբերյալ:

Շրջանավարտների մասնագիտական կարողությունների վերաբերյալ արատաքին շահակիցների՝ այս դեպքում գործատուների, բավարարվածությունը բավականին բարձր է:

Աղյուսակ 1 . Արտաքին շահակիցների բավարարվածությունը
ԵՊՀ ԻՄ շրջանավարտների մասնագիտական կարողություններից

Թիվ	**Շրջանավարտների**	**Միջին գնահատական**			
		2020թ.	**2021թ.**	**2022թ.**	**2023թ.**
1	Մասնագիտական պատրաստվածությունը	4.01	3.97	3.94	**4.26**
2	Տեսական գիտելիքների իմացությունը	4.10	4.00	4.02	**4.28**
3	Գործնական հմտությունները	3.87	3.71	3.71	**3.88**

8	Մասնագիտական խոսքը	4.04	3.79	3.87	**4.20**

Աղյուսակ 1-ից կարելի է փաստել, որ հաշվետու ժամանակահատվածում շրջանավարտների մասնագիտական կարողությունները զգալիորեն աճել են նախորդ 3 տարիների համեմատությամբ:

Խնդիր ունենք հիմնականում գործնական հմտությունների հետ կապված, ինչն էլ էականորեն փոխկապակցված է աշխատանքային փորձի հետ:

Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ ըստ գործատուների, մասնաճյուղի հեղինակությունը տարածաշրջանում զգալիորեն աճել է վերջին 4 տարիների համեմատությամբ: Այս արդյունքը պայմանավորված է ինչպես բուհի թափանցիկ գործունեությամբ և որակյալ կրթությամբ, այնպես էլ աշխատաշուկային մրցունակ շրջանավարտներ տալով:

Մասնաճյուղը վերջին 3 տարիներին տվել է 754 շրջանավարտ և շրջանավարտների բազայի վերջին թարմացված տվյալներով՝ նրանցից շուրջ 260-ն աշխատում են, որոնցից մինչև 100 շրջանավարտ աշխատում են մասնագիտությամբ: Ոչ մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների գերակայությունը պայմանավորված է մարզում աշխատատեղերի սակավությամբ:

Մասնաճյուղի կողմից հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել և պաշտոնական կայքէջում հրապարակվել է մարզում, Հայաստանում և աշխարհում պահանջված մասնագիտությունների ցանկը և այդ մասնագիտությունների ամփոփ նկարագրությունները:

Մասնաճյուղի կողմից նաև ուսումնասիրվում է շրջանավարտների բավարարվածությունը մասնաճյուղում ստացած կրթությունից:

Հավետու ժամանակահատվածում կատարվել է հարցում, որին մասնակցել են մասնաճյուղի 129 շրջանավարտից 124-ը՝ 96%: Մասնակցությունը փաստում է արդյունքների արժանահավատությունը:

Հարցման մասնակիցների 13%-ը գիտեր, թե որտեղ է աշխատելու ավարտելուց հետո, 20%-ը ավարտելու պահին արդեն աշխատում էր մասնագիտությամբ, 20%-ը՝ ոչ մասնագիտությամբ, 47%-ը դեռ աշխատանք չուներ (տվյալները 23.06.2024թ.):

Մասնաճյուղում ստացած ընդհանուր կրթությունից բավարարվածության գնահատականների միջինը կազմել է 4.4 միավոր:

Շրջանավարտների կողմից, որպես մասնաճյուղի ուժեղ կողմեր նշվել են. որակյալ կրթությունը, պրոֆեսորադասախոսական բարձրակարգ կազմը, ֆինանսապես մատչելիությունը, անհատական մոտեցումը և ջերմ մթնոլորտը, օբյեկտիվությունը, կազմակերպվածությունը, արտաքին լայն համագործակցությունը:

Որպես թույլ կողմեր նշվել են. մասնագիտական գրականության պակասը, շենքային անբավարար պայմանները, լսարանների սակավությունը, թույլ համակարգիչների

առկայությունը, պրակտիկաների քիչ քանակը և տևողությունը, կրթաթոշակների սակավությունը և չափը:

Նշենք, որ շրջանավարտները շնորհակալություն են հայտնել մասնաճյուղի ղեկավարներին, դեկաններին, պրոֆեսորադասախոսական կազմին՝ բարձ մակարդակով և մրցունակ կրթություն տալու և ջերմ ու ուսանողակենտրոն միջավայր ապահովելու համար:

9. Ենթակառուցվածքներ և պայմաններ

Հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղում իրականացվել է ուսումնական և վարչական տարածքների արդիականացման և վերազինման 10 ծրագիր: 2023-2024 ուստարում մասնաճյուղում աշխատանքային և կրթական պայմանների բարելավման նպատակով.

- ✓ կատարվել է առաջին մասնաշենքի ջեռուցման համակարգի հիմնանորոգում,
- ✓ բնական գիտությունների ֆակուլտետում բացվել է հետազոտական 1 լաբարատորիա,
- ✓ օժանդակ տարածքում կառուցվել է 2 նոր կաթսայատուն,
- ✓ ներդրվել է անվտանգության ապահովման նոր համակարգ /SOS/,
- ✓ վերանորոգվել և կահավորվել են ռուսական կենտրոնի և ֆրանսերեն լեզվի լսարանները,
- ✓ վերանորոգվել է վարչական մասնաշենքի երկու աշխատասենյակ և հարակից միջանցքը, սանհանգույցները,
- ✓ վերանորոգվել է 4 լսարան և 1 լսարանի հարակից միջանցքը,
- ✓ վերանորոգվել է մասնաճյուղի հյուրանոցի տանիքը:

2023-24 ուստարին մասնաճյուղը սկսել է 22 արդիականացված լսարաններով և համակարչային սրահներով, որոնք կազմում են ընդհանուր լսարանային ֆոնդի շուրջ 39%-ը: Այժմ մասնաճյուղում գործում են 4 համակարգչային սրահներ, որոնք հագեցած են անհրաժեշտ քանակությամբ համակարգիչներով, ունեն մասնագիտական պահանջներին համապատասխան ծրագրային ապահովում և սպասարկում, մասնաճյուղում գործում է անվճար գերարագ ինտերնետ կապ:

Հաշվետու ուստարում բնական գիտությունների ֆակուլտետում գործել են 2 համակարգչային սրահներ, պրոյեկտորով 1 լսարան, 2 մասնագիտական լաբորատորիա (ռոբոտատեխնիկայի) և թվային անվտանգության նորաբաց կենտրոնը: Այս սրահները և լաբորատորիաները համապատասխանում են կրթական ծրագրի իրականացման պահանջներին:

Կիրառական արվեստի ֆակուլտետում ուսանողների և դասախոսների ուսումնական և մասնագիտական աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու և ապահովելու

համար թարմացվել է 4 արվեստանոցների (փայտի գեղարվեստական մշակման, մետաղի, քանդակի, խեցեգործության) գույքը, ձեռք են բերվել անհրաժեշտ քանակի նոր նկարակալներ, դասընթացների իրականացման համար անհրաժեշտ նյութեր և պարագաներ, խեցեգործական նոր վառարան՝ անհրաժեշտ էլեկտրական գործիքներով:

Տնտեսագիտության ֆակուլտետում առկա են տեխնիկական միջոցներով հագեցած լսարաններ, որոնք կազմում են ֆակուլտետի լսարանային ֆոնդի 50%-ից ավելին և ապահովում են դասապրոցեսի արդյունավետ և բովանդակալից իրականացումը, գործում է գերարագ ինտերնետ կապ:

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի լսարանային ֆոնդն ընդգրկում է 20 լսարան, այդ թվում՝ անգլերեն լեզվի ռեսուրս-կենտրոնը, ռուսաց լեզվի և մշակույթի կենտրոնը և ֆրանսերենի ուսուցման սրահը և համակարգչային սրահը, որն օգտագործվում է տնտեսագիտության ֆակուլտետի հետ համատեղ:

2023-24 ուստարում Մասնաճյուղի գրադարանային ֆոնդը կազմել է 21.304 միավոր՝ նախորդ տարվա հետ համեմատությամբ աճը կազմել է 499 միավոր (գիրք-դասագիրք, մենագրություն, ուսումնամեթոդական ձեռնարկ, էլեկտրոնային գիրք, գիտական ամսագիր): 2023-24 ուստարում գրականության ձեռքբերման ծախսերը կազմել են 796.120 դրամ:

Գրադարանի էլեկտրոնային քարտարանը ամենօրյա գրաֆիկով համալրվում է նոր գրականության տեղեկատվությամբ, հասանելի է առցանց տարբերակով: Օգտվողը կարող է ստանալ ցանկացած գրքի առկայության վերաբերյալ տեղեկատվություն: Օգտագործման մատեչելիությունը բարձրացնելու նպատակով պատրաստվել է վիդեո-ուղեցույց, տեղադրվել էլեկտրոնային գրադարանի կայքէջում և սոցիալական էջերում, որը քայլ առ քայլ բացատրում է քարտարանից տեղեկատվության ստացման հաջորդականությունը: Ակտիվ կերպով լուսաբանվում են գրադարանում իրականցվող միջոցառումներն ու ծրագրերը:

✓ Շարունակվում է գրականության մուտքագրումը «KOHA» համակարգ և այս պահի դրությամբ առկա գրականության 85 տոկոսը կամ 18.324 միավոր գիրք, դասագիրք և ամսագիր հասանելի է էլեկտրոնային քարտարանում: ԵՊՀ գրադարանի աշխատակիցների աջակցությամբ իրականացվել է նոր 896 անուն գրքի և գիտական ամսագրի մուտքագրում, որոնք ԵՊՀ առցանց քարտարանում բացակայում են: Ընդհանուր առմամբ ԵՊՀ գրադարանը մասնաճյուղի համար մուտքագրել է 3.014 անուն նոր գիրք:

✓ Շարունակվում է գրականության թվայնացման գործընթացը: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 17 գրքի և դասագրքի թվայնացում:

✓ Շարունակվում է էլեկտրոնային գրադարանի կայքէջի համալրումը, արդիականացվում է վերջինիս ծառայությունները: Բացի առցանց քարտարանից, ընթերցողները հնարավորություն ունեն առցանց պատվեր ուղարկել, առաջարկել նոր գքրքերի ձեռքբերման պահանջագրեր, հարցեր գրադարանավարին՝ ներդրված ցանցային

գործիքի կիրառմամբ: Պետք է նշել, որ պահանջագրեր ներկայացնող ընթերցողների մի զգալի հատվածը հանդիսանում են այլ բուհերի ուսանողներ և աշխատակիցներ: Կայքէջը համալրվել է 57 միավոր գիրք-դասագրքով :

✓ Միջազգային գրադարանային ցանցերի և կոնսորցիումների /համընկերությունների գիտատեղեկատվական հնարավորությունների մասին գրադարանի կայքէջում հրապարակվել են տեղեկատվական նորություններ, որոնք կօգնեն ընթերցող-ուսանողին հայերեն լեզվով մատչելի տեղեկատվություն ստանալ միջազգային գրադարանային որոշ ցանցերի հնարավորությունների և բաց ռեսուրսների մասին: ԵՊՀ ԻՄ տարածքից հասանելի են ԵՊՀ գրադարանի կողմից մուտք ապահովվող բազմաթիվ գիտաչափական շտեմարաններ:

✓ Շարունակվում է օտարալեզու գրականության համալրման գործընթացը: Օտարալեզու գրականությունը համալրվել է նվիրատվությունների և գնումների միջոցով: Հաշվետու ժամանակահատվածում ռուսերեն գրականությունը ավելացել է 198 միավորով, որի հիմնական մասը ռուսական համագործակցային կազմակերպությունների՝ Ռուսական կենտրոնի նվիրատվությունն է: Անգլերեն լեզվով գրականությունը ավելացել է 19 միավորով՝ հիմնականում նվիրատվության միջոցով:

«Փրոջեքթ Հարմոնի» կազմակերպության հայկական մասնաճյուղի համագործակցությամբ մասնաճյուղում գործող «Ամերիկյան գրադարաններ և դասընթացների կենտրոնը» նպաստում է գրադարանի օտարալեզու և գեղարվեստական գրականության բացի լրացմանը և իրենց ավելի քան 460 միավոր գրականությունը ծառայեցվում է ուսանողների կարիքների համար:

Հետագա անելիքներ

Մասնաճյուղի գործունեությունն ակտիվացնելու, բարելավելու և նոր ձեռքբերումներ ունենալու համար անհրաժեշտ է.

1. բարելավել մասնաճյուղի բնագիտական և կիրառական արվեստի ֆակուլտետների ռեսուրսները՝ շենքային, լսարանային և ուսումնական,
2. իրականացնել մասնաճյուղի կառուցվածքի օպտիմիզացիա և կրթական ծրագրերի կառավարման ձևի փոփոխություն՝ զարգացնելով ծրագրերի ղեկավարների ինստիտուտը,
3. ակտիվացնել համագործակցությունը ԵՊՀ ստորաբաժանումների և համապատասխան ֆակուլտետների հետ, կազմակերպել ուսանողների փոխադարձ այցեր և մասնակցություն իրենց հետաքրքրող դասաժամերին,
4. ներդնել մեխանիզմներ և ռեսուրսներ դասախոսների և ուսանողների հետազոտական գործունեությունն ակտիվացնելու համար,

5. արտաքին շահակիցներին ներգրավել կրթական ծրագրերի վերանայման, իսկ ոլորտային կազմակերպությունների առաջատար մասնագետներին՝ ծրագրերի իրականացման գործընթացներում,
6. համագործակցության շրջանակներում օգտագործել շահակիցների ռեսուրսներն ու հնարավորությունները մասնագիտական պրակտիկաների արդյունավետ իրականացման համար,
7. ակտիվացնել կապը տարածաշրջանի ուսումնական հաստատությունների հետ, մասնաճյուղի և նրա կրթական ծրագրերի գովազդը՝ դիմորդների քանակն ավելացնելու համար,
8. ստեղծել շրջանավարտների միություն, մասնաճյուղի շրջանավարտներին ներգրավել ուսանողների հետ տարվող մասնագիտական և խորհրդատվական աշխատանքներում,
9. խորացնել համագործակցությունը արտասահմանյան բուհերի հետ, ստեղծել նոր կապեր, խրախուսել ուսանողների և դասախոսների միջազգային շարժունությունը,
10. զարգացնել օտար լեզվով (անգլերեն, ռուսերեն) իրականացվող դասընթացների ներդրման փորձը՝ նպաստելու լեզուների իմացության մակարդակի բարձրացմանը: